

ՎԻԿՈՐ
ՀԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՐՁԱԿՆ ՈՒ ՄՈՇԱԿԵ

831.99.5

4-30

891.895
Հ-30

ՎԻԿԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2011-07

ԴԵՐՁԱԿՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ


Նկարները և օտարիկը
ԱՆ. ՄԻՒԹՈՒԹՅՈՒՆԻ

ՊԵՏՇՐԱՑ
ՀԱՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՍՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԶԵՐԵՎԱՆ
1938

08.08.2013

13009


3




1484
39

I

Դերձակն ուներ
Մի խանութ,
Բայց նա չուներ
Լուսամուտ.
Էռլյափ համար
Քատիպված
Դուռն եր թողնում
Նա միշտ բայց:



Մի որ քամին
 Սաստկությամբ
 Փչեց, հանեց
 Փոշու ամպ.
 Ու փոշու հետ
 Շատ արագ
 Խանութ ընկավ
 Մի մոծակ:
 Զեռքը զրեց
 Ճակատին
 Ու բարենց
 Դերձակին.
 — Յես յեկել եմ
 Շատ հեռվից.
 Պետք ե խնդրեմ
 Քեզանից—
 Ի՞նչ կլինի,
 Այ վարպետ,
 Վոր ինձ վարձես
 Աշակերտ:




— Հավ, ականջ դիր
Նախ հիմի.
Պայմաններս
Մի առ մի.
Առավույան
Գիտի գառ՝
Դուան անցքից
Մտիկ տաս,
Թե վոր քնից
Յելնեմ յես
Դուռը
Կամաց կթակես,
Կավես խանութս
Մաքուր,
Ու կբերես
Դույլով ջուր.
Իսկ արդուկն ել
Սիրելիս,
Գիտի լինի
Միշտ կողքիս:

Անցավ յերկար
Ժամանակ,
Յեկան որել
Սաստիկ տաք:


Մանը եր գործը
Մոծակի,
Կանգնած եր նա,
Միշտ վոտքի:
Մի որ դուռը
Վայր դրեց
Ու զայրացած
Հարցըեց.
— Ամոթ հո չի
Հարցնեմ,
Յես հանգստի
Ժամ չունեմ...

— Տն անպիտան,
Կամակնը,




Հանգստի ժամ
Վորն ե, վոր.
Պաշտոնն ե քո
Աշխատել,
Վոչ թե վիճել
Ու զատել:

Ու յերկուսով
Վեր կացան,
Հայրոյեցին
Բարկացան,
Անպատվեցին
Մեկ-մեկի,
Գործը հասավ
Մկրտի...
Բայց մոծակը,
Նեղացավ
Ասեղները
Գողացավ.




Հետո սաստիկ
Զայրացած
Գործը թողեց
Ու գնաց:




Պատմեց խոբին
Մոծակի,
Վատ վարմունքը
Դերձակի:

Շատ խոսեցին
Վիճեցին,
Վրեժ հանել
Վճռեցին:
Հաջորդ որը
Պահ, պահ, պահ,
Մոծակներին
Թիվ չկա.
Մե ամպի պես
Շարժվեցին.
Խանութի շուրջ
Շարվեցին
Տըզ տզզալով
Համարձակ:
— Հյուր ենք յեկել,
Այ գերձակ...
— Հյուր եք յեկել,
Շատ քիչ եք.
Աչքիս վրա
Տեղ ունեք.



Դուք մրսել եք
Այնպայման,
Պետք ե վառեմ
Վառարան։


Վառարանը
Յերբ վառվեց,
Մոծակներին
Ներս կանչեց։
Ու յերբ խիտ ծուխ
Բարձրացավ,
Մեր գերձակը
Դուրս պրծափ։
Դուռն ել վակեց
Շատ ամուր,
Մոծակներին
Ընդհանուր՝
Նրանց թողեց
Խանութում,
Ծխով լեցված
Այդ ողում։
Բայց թե վոնց եր
Պատահել
Մի մոծակ եր
Դուրս պրծել.



Այդ մոծակը
Կիսախանձ՝
Մինչև ճահիճ
Մեկ գնաց:

Ես պրծնողն ել
Վշտով լի,
Աշակերտն եր
Դերձակի:

Եդ որվանից
Մոծակն ես
Ման ե զալիս
Գժի պես՝
Դողելոցքի
Տարածող՝
Ես մոծակը
Միշտ խայթող
Թռչում ե միշտ
Ու տզզում,
Այստեղ-այնտեղ
Վաղվղում:
Են դերձակի
Յերեսից,
Վոխ ե լուծում



Պատ. խմբագիր՝ Ս. Վահունի
Տեղ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սբբագրիչ՝ Հ. Մանուկյան

Մարդկանցից:
Իսկ մարդիկ ել
Անհանդիստ,
Հետևում են,
Նրանց խիստ,
Ճահիճներով
Ման գալիս
Նավթ ու դեղ են
Շաղ տալիս:



Դավիթակ լիազոր՝ Ա. 4015 Հրատ 4157.
Պատվեր 571. Տիրաժ 4000.
Թուղթ 72×105. Տպագը. 1¹/₄ մամ.
Մեկ մամ 16,3:0 նշան.
Հանձնված ե արտադրության 8 հունիսի 1938 թ.
Ստորագրված ե ապագրության համար 25 հունիսի 1938 թ.
Գետերատի 1 տպարան, Ցերեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0405423

13009

ԴԻՆԸ 86 ԿՈՊ.

В. ВАРТАНЯН
ПОРТНОЙ И КОМП.
Гиз. Арм ССР ЕРЕВАН 1938